



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ

22/մայիսի/2024 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...8... անդամներ:

Բացակա էին՝

*Ս. Մարտիրոսյան, Ս. Մարտիրոսյան, Ս. Համբարձումյան,
Ս. Մարտիրոսյան, Ս. Մարտիրոսյան, Ս. Մարտիրոսյան*

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝
2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. Վարդան Սարգսյան)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական՝ 2024 թվականի մայիսի 22-ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Ջերմուկ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) նախագծի մշակման աշխատանքների գործընթացը իրականացնելու ժամանակացույցը հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Տեղական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ քաղաքում ավտոկայանատեղի կազմակերպելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի N 15-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. Դրամական օգնություն տրամադրելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար Մ. Մարգարյան

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-----6----- Դեմ-----1----- Ձեռնպահ-----0-----
Ա. Չովարյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ (ՄԺԾԾ) ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. Արմինե Ղազարյան)

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) նախագծի մշակման աշխատանքների գործընթացների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. Արմինե Ղազարյան)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----7----- Դեմ-----1----- Ձեռնպահ-----0-----
Ա. Չովարյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

Լսեցին

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. Գոհար Թաղևոսյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկ համայնքի բնակիչ Գուրգեն Լենիկի Ավագյանի կողմից Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 5/1 հասցեում իրականացվող՝ հասարակական սպասարկման կենտրոնի կառուցման շինարարության թույլտվության երկարաձգման համար սահմանել տեղական տուրքի գծով արտոնություն՝ ազատել տեղական տուրքի վճարումից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ջերմուկ քաղաքի դեմ տեղի ունեցած ադրբեջանական ագրեսիային հաջորդող և վերահաս ձմռան ամիսներին շինարարությունը օբյեկտիվորեն դադարեցվել է:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36-Ա/

Լսեցին

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. Գոհար Թաղևոսյան)

Համաձայն Հարկային օրենսգիրքի 245-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 2-րդ և 3-րդ մասերի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 30-ի «Ջերմուկ համայնքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու կարգը սահմանելու մասին» N 47-Ն որոշմամբ՝

1. Արտոնություն սահմանել՝ Ջերմուկ քաղաքի բնակիչ Սոֆյա Սամսոնի Հակոբյանին (գրանցման հասցեն՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց, շենք 12, բնակարան 15, ՀԾՀ՝ 5112580445) ազատելով սեփականության իրավունքով պատկանող Toyota Camry 2.5 մակնիշի 07 LL 977 պետհամարանիշով ավտոմեքենայի փոխադրամիջոցի գույքահարկից՝ հաշվի առնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված անձի ընտանիքի անդամ՝ ծնող լինելու հանգամանքը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված արտոնությունը կիրառվում է ս/թ մայիսի 1-ից մինչև հարկման օբյեկտի նկատմամբ Սոֆյա Սամսոնի Հակոբյանի սեփականության իրավունքի դադարելը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. Գոհար Թադևոսյան)

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

1. Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 26 հասցեում գտնվող «Անի» հյուրանոցի հարևանությամբ համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման բաց հարթակում կազմակերպել ավտոկայանատեղի՝ դրա սահմանները համապատասխան գծանշումներով կամ երթևեկության կազմակերպման այլ տեխնիկական միջոցներով առանձնացնելով երթևեկելի մասից և կանոնակարգել դեպի կայանատեղ մուտքի ու ելքի հատվածները:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ավտոկայանատեղի կազմակերպիչը համայնքի ղեկավարն է:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար գանձվող տեղական վճարի դրույքաչափերը հաստատվել են Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր և տեղական վճարների արտոնություններ սահմանելու մասին» N 98-Ն որոշմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ավտոկայանատեղի տեղաբաշխումը Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության Ոստիկանության հետ համաձայնեցնելուց հետո:

Կողմ-----7----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----1-----
Կ. Չավարեան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ, ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 15-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 101-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. Գոհար Թադևոսյան)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի N 15-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 101-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման հավելված 2-ում 22-րդ տողի «Հաստիքի անվանումը» սյունակում «Համակարգչային սարքեր սպասարկող» բառերը փոխարինել «Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----⁷ Դեմ-----⁰ Ձեռնպահ-----¹
Վ. Շավուկյան

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 39-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. Մոմիկ Մարգարյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի

մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից 300 000-ական (երեք հարյուր հազարական) դրամ ֆինանսական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի բնակիչ Հրանտ Նորայրի Ալեքսանյանին և Արուսյակ Ժորայի Թադևոսյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝





1. Ջերմուկ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հունիսի 20-ին, ժամը՝ 15.00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N41-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	

Խաչատրյան Գոհար Բարկենի	<i>Գեւորգյան</i>
Համբարձումյան Մխիթար Սամվելի	<i>Բաղդասարյան</i>
Այվազյան Մխիթար Վուրդյայի	<i>Սարգսյան</i>
Մկրտչյան Մարինե Մայիսի	<i>Բաղդասարյան</i>
Բաբայան Ժիրայր Ժորայի	<i>Բաղդասարյան</i>
Մնացականյան Արկաղի Ալբերտի	<i>Սարգսյան</i>
Գևորգյան Մանան Աղվանի	<i>Սարգսյան</i>
Վահանյան Վարուժան Կնյազի	<i>Սարգսյան</i>
Հովակիմյան Ազատ Հայրիկի	<i>Սարգսյան</i>
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	<i>Բաղդասարյան</i>

Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝



Վարդան Սարգսյան

Նիստին արձանագրեց՝

Գոհար Թադևոսյանը՝

[Handwritten signature]

[Faint, illegible text and signatures at the bottom of the page]